

ՄԱԿ-ի Խաղաղության մանդատը

Տեղեկագիր No 1



ՄԱԿ-ի Հանրային տեղեկատվության վարչության Երևանյան գրասենյակ

Երևան 2008

ՄԱԿ-ի Խաղաղության մանդատը

Տեղեկագիր No 1.



ՄԱԿ-ի Հանրային տեղեկատվության
վարչության Երևանյան գրասենյակ

Երևան 2008

The present Reference Paper gives brief information on one of the primary objectives of the United Nations Organization since its establishment, which is preserving peace and providing global and regional security. All the other functions and objectives of the UN activities basically derive from this primary function of peace maintenance and constitute the components of the wider notion of security.

*The **UN Peace Mandate** includes such activities as disarmament, actions against terrorism, non-proliferation of the nuclear weapons and other non-conventional weapons of mass destruction as well as the limitation of the use of the conventional weapons and landmines in particular. It touches upon the security in its narrower sense i.e. prevention of conflicts and peace maintenance, which concentrates on three main concepts: peacemaking, peacekeeping and Peacebuilding.*

The Reference Paper is dedicated to the 60th Anniversary of UN Peacekeeping officially celebrated on 29 May 2008 – on International Day of United Nations Peacekeepers.

It is compiled and prepared for publication by DPI intern Artak Galyan.

Սույն տեղեկագրում համառոտակի ներկայացված է Միավորված ազգերի կազմակերպության առանցքային նպատակներից մեկը, այն է՝ խաղաղության պահպանում և համընդհանուր ու տարածաշրջանային անվտանգության ապահովում: ՄԱԿ-ի գործունեության մյուս բոլոր գործառույթներն ու նպատակները բխում են խաղաղության պահպանման այս առաջնային գործառույթից և առավել լայն հասկացության անվտանգության, բաղկացուցիչներն են:

***ՄԱԿ-ի խաղաղության մանդատը** ներառում է այնպիսի հասկացություններ, ինչպիսիք են զինաթափումը, ահաբեկչության դեմ ուղղված գործողությունները, միջուկային զենքի և այլ ոչ սովորական զանգվածային ոչնչացման զինատեսակների տարածման արգելումը, ինչպես նաև սովորական զինատեսակների և սկանների օգտագործման սահմանափակումը: Այն անդրադառնում է անվտանգության հասկացությանը ավելի նեղ իմաստով, այսինքն՝ հակամարտությունների կանխում և խաղաղության պահպանում, որը կենտրոնանում է երեք հիմնական հասկացությունների վրա. խաղաղարարություն, խաղաղապահություն և խաղաղաշինություն:*

Տեղեկագիրը նվիրված է ՄԱԿ-ի խաղաղապահության 60-ամյակին, որը պաշտոնապես նշվել է 2008թ. մայիսի 29-ին՝ ՄԱԿ-ի խաղաղապահների միջազգային օրը:

Այն հրատարակության համար մշակել և պատրաստել է ԴՏԿ պրակտիկանտ Արտակ Գալյանը:



UN Department of Public Information
Yerevan Office
UN AN-500-May 2008
UNO/DPI Yerevan/084

Բովանդակություն

Ներածություն	4
Խաղաղարարություն	6
Խաղաղապահություն	9
Խաղաղաշինություն	12
Խաղաղությունն ու անվտանգությունը XXI դարում	17
Հավելված Ա.	18
<p>ՄԱԿ-ի Խաղաղապահ առաքելությունների ռազմական և ոստիկանական անձնակազմ հատկացնող առաջին քսան երկրները</p> <p>ՄԱԿ-ի Խաղաղապահ առաքելությունների բյուջեին ֆինանսական հատկացումներ տրամադրող առաջին տասը պետությունները</p>	
Հավելված Բ.	19
<p>ՄԱԿ-ի Խաղաղապահ գործողությունները 1948-2008թթ.</p>	
Հավելված Գ.	22
<p>ՄԱԿ-ի իրականացրած խաղաղաշինական գործողությունները</p>	
Օգտագործված գրականության ցանկ	23

Ներածություն

Խաղաղության պահպանումը, համընդհանուր և տարածաշրջանային անվտանգության ապահովումը Միավորված ազգերի կազմակերպության հիմնադրման առանցքային նպատակներից մեկն է:

Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրության նախաբանում ասվում է.

«Մենք՝ Միավորված ազգերի ժողովուրդներս, լի վճռականությամբ փրկել գալիք սերունդներին պատերազմի արհավիրքից, որը մեր կյանքի ընթացքում երկու անգամ անասելի վիշտ է պատճառել մարդկությանը.....

որոշել ենք միավորել մեր ջանքերն այդ նպատակներին հասնելու համար»:

Անվտանգության և խաղաղության պահպանումը եղել և մնում է ՄԱԿ-ի ամենակարևոր գործառնություններից մեկը: ՄԱԿ-ի գործունեության մյուս գործառնություններն ու նպատակները բխում են խաղաղության պահպանման առաջնային գործառնությունից և առավել լայն հասկացության՝ անվտանգության բաղկացուցիչներն են: ՄԱԿ-ի անվտանգության և խաղաղապահության գործառնությից կանոնակարգվում է Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրության I գլխի I հոդվածով և V, VI, VII, XVII գլուխներով:

Այսպիսի կազմակերպության կարիքն առաջացել է Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտից հետո, երբ միջազգային հանրությունը գիտակցեց «համաշխարհային միջնորդի» անհրաժեշտությունը, որը հնարավորություն տար հակադիր կողմերին բանակցությունների միջոցով կարգավորելու իրենց տարաձայնությունները և այն դեպքում, երբ կողմերն անկարող լինեին ինքնուրույն կարգավորել հակամարտությունը, որպես միջնորդ ներգրավվեց կարգավորման գործընթացում:

ՄԱԿ-ի անվտանգության և խաղաղարարության գործառնությունն իրականացնում է խաղաղության և անվտանգության հարցերով զբաղվող հիմնական միջազգային մարմինը՝ Անվտանգության խորհուրդը, որն օժտված է համաշխարհային խաղաղության պահպանման բոլոր անհրաժեշտ միջոցները ձեռնարկելու լիազորությամբ, ներառյալ պատժամիջոցներին դիմելը, ինչպես նաև միջազգային անվտանգությանը սպառնացող վտանգի առկայության դեպքում՝ անդամ երկրների հանդեպ այլ պատժիչ գործողություններ ձեռնարկելու լիազորությամբ:

ՄԱԿ-ը, իրականացնելով իր խաղաղության պահպանման առաքելությունը, համագործակցում է տարածաշրջանային խաղաղության և անվտանգության հարցերով զբաղվող կազմակերպությունների հետ, ինչպիսիք են Եվրամիությունը (ԵՄ), Հյուսիսատլանտյան դաշինքը (ՆԱՏՕ), Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպությունը (ԵԱՀԿ), Ասիական հարավարևելյան ազգերի ընկերակցությունը (ԱՀԱԱԸ), Աֆրիկյան միությունը (ԱՄ) և այլք: Անվտանգության խորհուրդը կարող է լիազորել այդ կազմակերպություններին խաղաղապահական կամ խաղաղաշինական առաքելություններ իրականացնել տվյալ տարածքներում:

Անվտանգության և խաղաղության պահպանման գործառնությունն ընդգրկում է այնպիսի հասկացություններ, ինչպիսիք են զինաթափումը, ահաբեկչության դեմ ուղղված գործողությունները, միջուկային զենքի տարածման արգելումը, զանգվածային ոչնչացման և այլ ոչ սովորական զինատեսակների տարածման արգելումը, ինչպես նաև սովորական զինատեսակների

և ականների օգտագործման սահմանափակումը: Մույն հոդվածում, սակայն, *անվտանգություն* հասկացությունը կքննարկի ավելի նեղ իմաստով, այսինքն՝ կղիտարկվեն հակամարտությունների կանխման ու խաղաղության պահպանման խնդիրները: Այս նկատառումով ուշադրության կհիշակետում կլինի 3 հիմնական հասկացություն, որոնք սերտորեն առնչվում են հակամարտության կանխմանը և խաղաղության ապահովմանը: Գրանք են՝ խաղաղարարություն, խաղաղապահություն և խաղաղաշինություն. ի դեպ խաղաղության պահպանման ռազմավարությունների վերջին զարգացումների արդյունքում խաղաղաշինություն հասկացությունը ընդգրկում է այս բոլոր 3 տարրերը:

Գործունեության այս 3 տեսակները սերտորեն շաղկապված են և հաճախ միաձուլված: Խաղաղության պահպանման արդի գաղափարը մինչև կոնֆլիկտային միջամտության իրականացումն է, առավելապես ռազմական և ոստիկանական խաղաղապահ գործողությունները՝ համոզելու հակադիր կողմերին բանակցությունների սեղանը նախընտրել գեներլ ուժից, իսկ հետպատերազմական խաղաղաշինական առաքելությունները նպատակաուղղված են ժողովրդավարական հաստատությունների և անհրաժեշտ պայմանների ստեղծմանը, որոնք էլ կբացառեն հակամարտության վերսկսման հնարավորությունը:

Խաղաղարարությունը մինչև կոնֆլիկտային կանխարգելիչ դիվանագիտական միջոցառումների համալիր է, որը միջնորդներն իրականացնում են տարաձայնությունները մեղմելու և հակադիր կողմերին հաշտեցնելու նպատակով: Հավանական զինված հակամարտության առանցքային պատճառները վերացնելու համար կանխարգելիչ գործողություններն ավելի ձեռնտու են, քան կոնֆլիկտի հետևանքների՝ զանգվածային ավերածությունների վերացումը և խաղաղապահական առաքելության տեղակայումը կամ երկարաժամկետ խաղաղաշինական ծրագրի իրականացումը:

Խաղաղապահությունը խաղաղության պայմանագրերի կամ հրադադարի ռեժիմի պահպանմանը միտված գործողություն է:

Խաղաղաշինությունը հիմնականում երկարաժամկետ համալիր առաքելություն է, որ ձգտում է հզորացնել կայուն զարգացումը և ստեղծել խաղաղաշինության աջակցման և զինված հակամարտության հնարավոր վերսկսման բացառման համար անհրաժեշտ պայմաններ ու հաստատություններ: Խաղաղաշինությունն առաջարկում է քաղաքական, ռազմական և մարդասիրական համակցված գործողությունների իրականացում՝ ներառելով ռազմական, ոստիկանական, ինչպես նաև քաղաքացիական ուժերի տեղակայումը:

Այժմ ավելի հանգամանալից անդրադառնանք խաղաղության պահպանման վերոհիշյալ 3 տարրերին և համաշխարհային խաղաղության պահպանման վերջին միտումներին, որոնք ձևավորվել են 2005թ. գազաթափողովից հետո:

Խաղաղարարություն

Ինչպես վերը նշվեց, Խաղաղարարությունը մինչև կոնֆլիկտային դիվանագիտական միջոցառումների համալիր է, որի նպատակն է համոզել կողմերին դադարեցնել պատերազմական գործողությունները և վեճը կարգավորել բանակցությունների միջոցով: Միջնորդների դերը կարող են իրականացնել միջազգային հարաբերություններում գործող անձինք և հաստատություններ, մասնավորապես ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղարը, Գլխավոր քարտուղարի հատուկ ներկայացուցիչները, պատվիրակները և այլ պաշտոնյաներ, որոնք գործում են Գլխավոր քարտուղարի անունից:

Ստեղծման առաջին օրերից ի վեր ՄԱԿ-ը զինված հակամարտությունների կանխարգելման և կարգավորման դիվանագիտական միջոցներ է ձեռնարկել: ՄԱԿ-ի Խաղաղարարությունը ծաղկում է ապրել 1990-ական թվականներին, քանի որ սառը պատերազմի ավարտը քաղաքացիական պատերազմները բանակցությունների միջոցով կարգավորելու նոր հնարավորություններ ընձեռեց: Մեծ թվով կոնֆլիկտներ են լուծվել ՄԱԿ-ի անմիջական միջամտությամբ և նրա աջակցությամբ գործող երրորդ կողմերի մասնակցությամբ: Խաղաղարարության հաջող օրինակների շարքում կարելի է հիշատակել Էլ Սալվադորի, Գվատեմալայի, Նամիբիայի, Կամբոջայի, Մոզամբիկի, Տաջիկստանի, Բուրնդիի, Աֆղանստանի, Սիեռա Լեոնի, Բուրունդիի և Սուդանի հյուսիս-հարավ հակամարտության կապակցությամբ իրականացված առաքելությունները: Օրինակ՝ Գլխավոր քարտուղարի գործունեությունը նպաստել է Իրանի և Իրաքի 1980թ. ընթացող պատերազմի դադարեցմանը: Աֆղանստանում Գլխավոր քարտուղարի և նրա պատվիրակի միջնորդությունը հանգեցրեց 1988թ. համաձայնագրի կնքմանը, որի շնորհիվ երկրից դուրս բերվեցին խորհրդային զորքերը: Կամբոջայի, Կենտրոնական Ամերիկայի, Կիպրոսի, Մերձավոր Արևելքի, Մոզամբիկի և Նամիբիայի պարագայում գործի են դրվել այն բոլոր եղանակները, որոնց դիմում է Գլխավոր քարտուղարը՝ հանդես գալով որպես Խաղաղարար:

Արդի աշխարհում կանխարգելիչ գործունեությունն անցնում է ավանդական կանխարգելիչ դիվանագիտության սահմանները: Այն ընդգրկում է աննախադեպ լայն համագործակցություն ՄԱԿ-ի կազմում գործող կառույցների և այնպիսի ոլորտներում ներգրավված գործակալությունների միջև, ինչպիսիք են զարգացումը և աղքատության նվազեցումը, մարդու իրավունքների և օրենքի զերակայությունը, ժողովրդավարական հաստատությունների ձևավորումը, փոքր տրանսպահի զինամթերքի վերահսկումը և այլն: ՄԱԿ-ը վճռականորեն որոշել է արձագանքման քաղաքականությունից անցնել կանխարգելման՝ սերտորեն համագործակցելով միջազգային հանրության ու անդամ երկրների հետ և իրականացնելով ավելի բազմակողմանի ռազմավարություններ, որոնք վերացնեն վեճի խոր կառուցվածքային պատճառները:

ՄԱԿ-ի՝ կոնֆլիկտների կանխարգելմամբ զբաղվող առաջատար մարմինը՝ Քաղաքական հարցերի վարչությունը (ՔՀՎ), կարևոր դեր ունի՝ հետևյալ կերպ նպաստելով կոնֆլիկտների կանխարգելմանը. վերահսկում է աշխարհում տեղի ունեցող քաղաքական զարգացումները և նախագուշակում հնարավոր ճգնաժամի մասին, աջակցում է կանխարգելիչ դիվանագիտության մեջ ներգրավված Գլխավոր քարտուղարին, նրա հատուկ պատվիրակներին և քաղաքական առաքելություններին, ինչպես նաև ՄԱԿ-ի մաս կազմող կառույցների, տարածաշրջանային կազմակերպությունների և քաղաքացիական հասարակության համագործակցությամբ: Խաղաղարարության շրջանակներում ՔՀՎ-ն կատարում է հետևյալ գործողությունները.

- Համակարգում է Գլխավոր քարտուղարի զեկույցները զինված հակամարտության

կանխարգելման վերաբերյալ:

- Միավորված ազգերի Չարգացման ծրագրի (ՄԱՉԾ) հետ համատեղ իրականացնում է «Ձևավորել ազգային ներուժ հակամարտությունների կանխարգելման համար» ծրագիրը: Օգնում է կառավարություններին, քաղաքական ուժերին և քաղաքացիական հասարակություններին ձեռք բերել տարածայնությունները խաղաղ ճանապարհով լուծելու հմտություններ և փորձ: 2005թ. ընթացքում ծրագիրն աշխուժորեն ծավալվում էր Գայանայում, Էկվադորում, Գանայում, Քենիայում, Սիեռա Լեոնում, Չինքաբվեում և Եմենում:
- Հանդիպում է կազմակերպում Խաղաղության և անվտանգության գործադիր հանձնաժողովի հետ և մասնակցում է Վադ նախագուշացման ու կանխարգելման գործողությունների միջգերատեսչական ձևաչափին՝ այդ կերպ նպաստելով ՄԱԿ-ի համակարգի տարբեր վարչությունների և գործակալությունների համապարփակ աշխատանքի իրականացմանը այնպիսի ճգնաժամերի պարագայում, որոնք կանխարգելիչ գործողություններ են պահանջում: ՔՀՎ-ն փորձում է ամրապնդել Միավորված ազգերի և քաղաքացիական հասարակության համագործակցությունը հակամարտությունների կանխարգելման գործում:
- Աջակցում է նաև Գլխավոր քարտուղարի՝ ցեղասպանությունների կանխարգելման հարցերի հատուկ խորհրդականին¹: Հատուկ խորհրդականը փորձում է զարգացնել իրավիճակների, ներառյալ մարդու իրավունքների զանգվածային խախտումների վաղ նախագուշացման համակարգը, և միջազգային մարդասիրական օրենքները: Հատուկ խորհրդականը իրականացնում է հետևյալ գործառնությունները. հավաքում է մարդու իրավունքների զանգվածային, էթնիկ ու ռասայական ծագում ունեցող խախտումների, ինչպես նաև միջազգային մարդասիրական օրենքների խախտման վերաբերյալ տեղեկությունները, գործում է որպես նախագուշացնող մեխանիզմ, խորհուրդներ է տալիս ցեղասպանության կանխման կամ անհապաղ դադարեցման համար անհրաժեշտ գործողությունների վերաբերյալ:

2005թ. գազաթաժողովը գորակցություն հայտնեց Գլխավոր քարտուղարին խաղաղարարության ձեռքբերման նպատակով միջնորդական գործողությունների և խաղաղարարության նոր տարրերի զարգացման ձեռնարկումներում: Այժմ ՔՀՎ-ն այդ որոշումն իրականացնելու աշխատանքներ է տանում: Վարչությունը հակված է միջնորդական գործողությունների համապատասխան մասնագիտական փորձառության, գիտելիքի և անհրաժեշտ ռեսուրսների կենտրոնի դեր կատարելու ՄԱԿ-ի ողջ համակարգի համար: Այն կարող է կապող օղակ դառնալ երրորդ կողմերի կողմից ձեռնարկված միջնորդական նախաձեռնությունների պարագայում, որոնց համար ՄԱԿ-ը կարող է օժանդակիչ դեր կատարել:

Նախատեսված բարելավումները ներառում են հնարավոր լավագույն միջնորդներին ճանաչելու և ներգրավելու մի նոր համակարգ: Մեծ ուշադրություն է հատկացվելու նաև համապատասխան վերապատրաստման և կողմնորոշման ապահովմանը:

Վերջապես, Բարձր մակարդակի հանձնախմբի առաջարկությամբ որոշում է ընդունվել

¹ 2007թ. մայիսի 29-ին, Գլխավոր քարտուղար Բան Կի-Մունը Զեղասպանությունների կանխարգելման հարցերի հատուկ խորհրդականի պաշտոնում նշանակեց Ֆրենսիս Դենզին, որը հաջորդեց 2004թ. նշանակված Խուան Մենդեսին: 2008թ. փետրվարի 19-ին Գլխավոր քարտուղար Բան Կի-Մունը ևս մեկ հատուկ խորհրդականի նշանակեց՝ Էրուարդ Լաքին: Այդ պաշտոնում է. Լաքը կգրավի ազգաբնակչությանը ցեղասպանություններից, էթնիկ զտումներից և մարդկության դեմ հանցագործություններից պաշտպանելու հարցերով:

ԶՀՎ-ի շրջանակներում ստեղծել Միջնորդության աջակցության բաժին, որը կձառայի որպես Խաղաղարարական փորձի հավաքակետ և ձեռք բերված գիտելիքների ու լավագույն փորձի տեղեկատվության կենտրոն: Այս բաժինը նաև կհամակարգի միջնորդների վերապատրաստումը և խորհուրդներ կտրամադրի ՄԱԿ-ի չափանիշների ու գործող ընթացակարգերի վերաբերյալ:

Խաղաղապահություն

ՄԱԿ-ի խաղաղապահ գործունեությունը աշխարհում խաղաղության և անվտանգության ապահովման կարևոր գործիք է միջազգային հանրության ձեռքին: Խաղաղապահության միջոցով հակամարտող երկրներին օգնելու հնարավորություն է ընձեռվում՝ խաղաղության համաձայնագրերի աջակցությամբ, հրադադարի ռեժիմների պահպանմամբ, ինչպես նաև հետագա խաղաղապահական գործողությունների երաշխավոր լինելով կայուն զարգացման պայմաններ ստեղծելու համար:

Խաղաղապահությունն իրականանում է ռազմական և ոստիկանական ուժերի՝ հանրաժանոք «Կապույտ սաղավարտների», ինչպես նաև քաղաքացիական անձնակազմի տեղակայման միջոցով: Այդ ուժերը վերահսկում են հրադադարի կարգը և խաղաղության համաձայնագրերի իրականացումը: ՄԱԿ-ի կանոնադրության համաձայն՝ բոլոր անդամ երկրները պետք է ՄԱԿ-ին անհրաժեշտ զինված ուժեր և անձնակազմ տրամադրեն: 1948թ. ի վեր ավելի քան 130 երկրներ խաղաղապահ գործողություններ իրականացնելու համար ռազմական և ոստիկանական ուժեր, ինչպես նաև քաղաքացիական ծառայողներ են տրամադրել: Խաղաղապահ գործողությունների սկզբնավորումից ի վեր ՄԱԿ-ի դրոշի ներքո շուրջ 1 միլիոն զինվոր է ծառայել: 2007թ. դեկտեմբերի 31-ից 119 երկրներ ընդհանուր հաշվով տրամադրել են 83 854 համազգեստավոր ծառայող (ռազմական և ոստիկանական): Կան նաև ՄԱԿ-ի շուրջ 4862 միջազգային քաղաքացիական ծառայողներ, 1998 կամավորներ և 11 404 տեղական քաղաքացիական ծառայողներ: 2006թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ խաղաղապահ գործողություններին գործ տրամադրող 10 հիմնական պետություններն են Բանգլադեշը, Պակիստանը, Հնդկաստանը, Նեպալը, Հորդանանը, Գանան, Նիգերիան, Ուրուգվայը, Իտալիան և Սենեգալը, որոնք տրամադրել են ՄԱԿ-ի ռազմական և ոստիկանական անձնակազմի ավելի քան 59%-ը²:

ՄԱԿ-ի խաղաղապահությունը ֆինանսական տեսանկյունից բավական տպավորիչ է: 1993թ. ՄԱԿ-ի խաղաղապահության տարեկան ծախսերը հասել են մոտ 3.6 միլիարդ դոլարի, դա պայմանավորված էր նախկին Հարավսլավիայում և Սոմալիում ծավալված գործողություններով: 1998թ. այդ ծախսերը կազմել են 1 միլիարդ: 2007թ. հուլիսի 1-ից մինչև 2008թ. հունիսի 30-ն ընկած ժամանակահատվածում հաստատված ռեսուրսների արժեքը հասնում է մինչև 6,8 միլիարդ դոլարի: Իսկ 1948-ից մինչև 2008թ. հունիսը գործողությունների ընդհանուր արժեքը կազմում է մոտ 54 միլիարդ դոլար: Բոլոր անդամ երկրները իրենց իսկ կողմից հաստատված բանաձևի համաձայն պարտավոր են վճարել խաղաղապահ ծախսերի իրենց մասնաբաժինը: ՄԱԿ-ի խաղաղապահության բյուջեն ապահովող հիմնական 10 երկրներն են ԱՄՆ-ն, Ճապոնիան, Գերմանիան, Սիացյալ Թագավորությունը, Ֆրանսիան, Իտալիան, Կանադան, Իսպանիան, Չինաստանը և Նիդեռլանդները, որոնք մեծ ութնյակի երկրների հետ միասին ապահովում են բոլոր ներդրումների 81%-ը:

Ըստ ՄԱԿ-ի կանոնադրության՝ Անվտանգության խորհուրդը լիազորված է կառավարությունների և ներգրավված կողմերի համաձայնությամբ նախաձեռնել խաղաղապահ գործողություններ: Գործողությունների մեծ մասը հաստատվում և իրագործվում է ՄԱԿ-ի, ինչպես նաև անդամ երկրների՝ նրա անմիջական ղեկավարության ներքո ծառայող զորքերի կողմից: Մնացած դեպքերում, երբ ՄԱԿ-ի անմիջական ներգրավվածությունն անիրատեսական և անտեղի է, Անվտանգության խորհուրդը խաղաղապահ գործողություն իրականացնելու լիազո-

² Ամենաշատ անձնակազմ և ֆինանսական միջոցներ հատկացնող պետությունների ցանկը տես Հավելված Ա-ում:

րություն է տալիս տարածաշրջանային և այլ միջազգային կազմակերպությունների:

Լիազորումը կատարվում է խաղաղապահ գործողության իրականացման մանդատ տրամադրելու միջոցով: Մանդատը ՄԱԿ-ի զինված ուժերի առաջադրանքների և լիազորությունների բնութագրումն է: Այն սովորաբար ներառում է հստակ ժամանակացույց, ըստ որի պետք է իրականացվեն առաքելությունները: Առաքելությունների մեծ մասը գլխավորում է Գլխավոր քարտուղարի հատուկ ներկայացուցիչը:

Խաղաղապահ գործողություններն ի սկզբանե ձևավորվել են սառը պատերազմի ժամանակ, երբ խաղաղապահությունը սահմանափակվում էր ՄԱԿ-ի հրամանատարության ներքո գործող անգեն կամ թեթև զինված ռազմական ուժերի տեղակայմամբ: Այդ ուժերի գործառնությունը հրադադարի կարգի, գորբերի դուրսբերման կամ խաղաղ համաձայնագրի մյուս տարրերի իրականացման դիտարկումն ու աջակցումն էր: Սառը պատերազմի և երկբևեռացման ավարտը զգալի փոփոխության ենթարկեց ՄԱԿ-ի խաղաղապահությունը՝ այդ գործողությունները դարձնելով համալիր առաքելություններ՝ խաղաղության առավել բազմակողմանի պայմանագրեր իրականացնելու նպատակով: Խաղաղապահությունը, հանուն կայունության հաստատման, հետզհետե ավելի ու ավելի էր ոչ ռազմական տարրեր ընդգրկում: Այդպիսի գործողությունները ներառում են՝ մարդկային անվտանգության բարելավում, վստահության ձևավորման միջոցների ձեռնարկում, իշխանության տարանջատման և հավասարապես բաշխման միջոցառումներ, ընտրական գործընթացների բարելավում ու զարգացում, օրենքի գերակայության գորացում, ինչպես նաև սոցիալ-տնտեսական զարգացում: Խաղաղապահության նոր տարրերի շնորհիվ 1992թ. ստեղծվեց մի նոր կառույց՝ Խաղաղապահ գործողությունների վարչությունը: Այդ կառույցն ստեղծվեց համալիր խաղաղապահ գործողությունների հարաճուն պահանջարկը բավարարելու և այդ գործողությունները արդյունավետ կառավարելու նպատակով³:

Հիմնադրումից ի վեր ՄԱԿ-ն աշխարհում իրագործել է շուրջ 63 խաղաղապահ գործողություններ: Ներկայումս ՄԱԿ-ի խաղաղապահ գործողությունների վարչությունը 20 երկրներում իրականացնում է մոտ 17 խաղաղապահ գործողություններ:

Խաղաղապահությունը կարճ ժամանակամիջոցում կարելի է հաջողված համարվել, եթե Անվտանգության խորհրդի կողմից տրված մանդատն արդյունավետ է իրականացվում: ՄԱԿ-ի խաղաղապահական առաքելության արդյունավետությունը որոշվում է նաև երկրի՝ երկարաժամկետ խաղաղության ու կայունության պահպանման, ինչպես նաև զարգանալու հնարավորություններով: Խաղաղության պահպանման և վերականգնման համար ժամանակ է հարկավոր, իսկ խաղաղությունից կայունության անցնելու գլխավոր գործոնը միջազգային հանրության և տեղական կառույցների համատեղ աշխատանքն է, մինչև որ վերջիններս պատրաստ լինեն պատասխանատվություն կրել օրենքի գերակայության ու կայուն զարգացման ժողովրդավարական դեկլարման համար: Ենթադրվում է, որ իրական կայունություն ձեռք բերելու համար խաղաղապահ գործողությունները կներառվեն ավելի երկարաժամկետ ծրագրերում:

- Ներկայումս ՄԱԿ-ի խաղաղապահության առաջ ծառայած առանցքային հարցերն են.
- Անձնակազմի խնդիրը: Կարևոր խնդիրներից մեկը հարաճուն խաղաղապահ գործողությունների համար զինված ուժերի հայթայթումը և «հյուսիսային երկրների» մասնակցությունն է այդ գործին: Բավականին բարդ խնդիր է արդարադատության, քաղաքացիական վարչարարության, տնտեսական զարգացման կամ այլ բնագավառներում մասնագիտացած հազարավոր որակյալ ոստիկանների և քաղաքացիական անձանց հավաքագրման պահանջներին համապատասխանելը:
 - Հիմնական գործառնությունն ու կառավարությունը վերահաստատելու անհրաժեշ-

³ Խաղաղապահ գործողությունների ամբողջական ցանկը տես Հավելված Բ-ում:

տությունը: Ներկայումս բոլորը համամիտ են, որ ՄԱԿ-ը պետք է զբաղվի պետականության հիմնարար գործառույթների վերականգման հարցով, ինչպես նաև հետկոնֆլիկտային հասարակությունների հնարավորինս արագ վերադարձով բավարար և կայուն վիճակին: Այդ հիմնարար գործառույթների թվում են արդարադատության ապահովումը, հանրային կառավարումը և կենցաղային պայմանների ապահովումը:

- **Օրենսդրություն և կարգուկանոն:** ՄԱԿ-ը օրենքի գերակայությունը ընդունել է որպես իր առաքելությունների պլանավորման առանցքային բաղադրիչ և նշանակալից առաջընթաց արձանագրել ընթացիկ գործողություններում ոստիկանության, արդարադատության և քրեակատարողական հաստատությունների գործունեության աջակցման ներուժի ստեղծման հարցում: Հետկոնֆլիկտային հասարակությունների արդարադատության համակարգը՝ դատարանները, դատախազությունը և ազատագրկման հաստատությունները, պետք է կարողանան կոնֆլիկտի վաղ շրջանում ապահովել անկախ արդարադատության իրականացումը: Իրավիճակի բերումով կարող է պատերազմի հանցագործությունները քննող դատարանի կամ արդարության և հաշտեցման հանձնաժողովի ստեղծման անհրաժեշտություն ծագել:
- **Ընտրական գործընթացներ և ժողովրդավարության վերականգնում:** Որոշ խաղաղապահ առաքելություններ լիազորված են տեղական ընտրություններ անցկացնել կամ աջակցություն ցուցաբերել դրանց: Ընտրություններն, այնուամենայնիվ, այն ոլորտը չեն, որտեղ կարելի է արագ արդյունքներ ակնկալել: Ուստի ներկայումս ՄԱԿ-ը կարևորում է առաջին հերթին անհրաժեշտ պայմանների, ներառյալ անվտանգության անհրաժեշտ մակարդակի, համապատասխան օրենսդրական համակարգի, ընտրողների գրանցման թափանցիկ գործընթացի ապահովումը և համընդհանուր հավանության արժանացած սահմանադրության առկայությունը:
- **Անվտանգություն:** Անվտանգ միջավայրը որոշիչ դեր ունի խաղաղապահ առաքելության հաջողության համար: Խաղաղապահ գործողությունը առաքելության սկզբնական շրջանում՝ մինչև տեղական վստահելի ոստիկանական ուժերի կազմավորվելը և նախկին պայքարողների հզորանալը, կայունության և անվտանգության ապահովման համար կարող է մեծաքանակ գորքի կարիք ունենալ:
- **Համատեղ գործունեություն:** ՄԱԿ-ը Անվտանգության խորհրդի միջոցով համաժողովի է հրավիրում աշխարհի բոլոր երկրներին՝ միասին որոշելու, թե ինչպես արձագանքել խաղաղության և անվտանգության սպառնալիքներին: Իրաքյան պատերազմին նախորդող դիվանագիտական գործողությունները ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղարին թելադրեցին ստեղծել Սպառնալիքների, մարտահրավերների և փոփոխությունների բարձր մակարդակի հանձնաժողով, որը պետք է առաջարկություններ աներ համատեղ գործողությունների վերաբերյալ: Այդ առաջարկություններից մի քանիսը հավանության արժանացան 2005թ. սեպտեմբերին տեղի ունեցած գագաթաժողովում. աշխարհի առաջնորդները գնահատեցին ՄԱԿ-ի խաղաղապահ գործունեությունը և համաձայնեցին ձևավորել Խաղաղաշինության հանձնաժողով՝ մի հավաքատեղի, որտեղ հնարավոր լինի ընդհանուր ռազմավարություն ձևավորել, որպեսզի հետկոնֆլիկտային վերականգնվող երկրները չվերադառնան հակամարտության:

Խաղաղաշինություն

Խաղաղաշինությունը կայուն զարգացման ու երկարատև խաղաղության համար անհրաժեշտ պայմանների և կառույցների ստեղծումն է և կոնֆլիկտի վերսկսման հավանականության բացառումը: Այս ընդգրկուն հասկացությունը ներառում է այնպիսի հարցեր, ինչպիսիք են պետական և հասարակական հաստատությունների զարգացումը, մարդու իրավունքների ապահովումն ու հարգանքը, ազատ և արդար ընտրական գործընթացը, քաղաքացիական հասարակության զարգացումը և կայուն տնտեսական զարգացման ու հասարակության անվտանգության արդյունավետ համակարգի աջակցման համար անհրաժեշտ պայմանների ստեղծումը: Այլ կերպ ասած՝ խաղաղաշինության նպատակը կոնֆլիկտի հանգեցնող բոլոր հնարավոր պատճառները նվազագույնին հասցնելն ու վերացնելն է: Խաղաղարարությունը և խաղաղապահությունն արդյունավետ են կարճատև բախումների դեպքում և կարող են արդյունավետ չլինել այն դեպքում, երբ երկարաժամկետ խաղաղ կեցության ապահովման անհրաժեշտություն կա:

ՄԱԿ-ի ստեղծումից ի վեր շուրջ 150 երկրներում 200 զինված բախումներ են տեղի ունեցել: Միայն վերջին 15 տարիների ընթացքում ավելի քան 100 կոնֆլիկտներ են արձանագրվել, որոնցից 30-ը դեռ չեն մարել: Եվ վերջին շրջանի գրեթե բոլոր կոնֆլիկտները ներքին բնույթ ունեն: Ավելին, պատերազմած երկրների 50 տոկոսը 5 տարվա ընթացքում կրկին զինված բախման մեջ է հայտնվել: Ուստի կոնֆլիկտային երկրներին երկարատև խաղաղություն և կայունություն ձեռք բերելու հարցում օգնելու խիստ անհրաժեշտություն կա: Պատերազմից խաղաղության գնացող երկրներին աջակցություն ցույց տալը ՄԱԿ-ին նետված հիմնական մարտահրավերներից մեկն է: Խաղաղապահ գործողությունների վարչությունը ստանձնել է համալիր խաղաղապահ գործողությունների ծրագրման և ղեկավարման դերը. ՄԱԶԾ-ն ուշադրությունը սևեռել է վերականգնման աջակցության վրա, ԶՀՎ-ն շարունակում է և այսուհետև էլ կշարունակի նպաստել խաղաղարար գործողություններին, ինչպես նաև միջնորդության բնագավառում իր հնարավորություններն ընդլայնելու քայլեր կձեռնարկի: Մեծ դեր են կատարում նաև ուրիշ վարչություններ, գործակալություններ, հիմնադրամներ և ծրագրեր, ինչպիսիք են Մարդասիրական հարցերի համակարգման գրասենյակը, ՄԱԿ-ի Մարդու իրավունքների գերագույն հանձնակատարի գրասենյակը (ՄԻԳ-ՀԳ), ՄԱԿ-ի Փախստականների հարցերի գերագույն հանձնակատարի գրասենյակը (ՄԱՓԳ-ՀԳ), ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամը (ՄԱՄՀ) և Պարենի համաշխարհային ծրագիրը (ՊՀԾ): Ներկայումս ՄԱԿ-ը 9 երկրներում և 3 տարածաշրջաններում շուրջ 3898 անձնակազմով խաղաղաշինական գործողություններ է ծավալում⁴:

Այսուհանդերձ, 2005թ. գազաթափողովի ժամանակ ՄԱԿ-ի նախկին Գլխավոր քարտուղար Քոֆի Անանը համալիր խաղաղաշինական առաքելությունների խնդիրը լուծելու համար առաջարկեց Խաղաղաշինական հանձնաժողով ստեղծել: Հանձնաժողովի հիմնական նպատակն է համակարգել ՄԱԿ-ի տարբեր գործակալությունների և ուրիշ միջազգային կազմակերպությունների բազմակողմանի խաղաղաշինական գործողությունները: Խաղաղաշինական հանձնաժողովը խորհրդատվություն տրամադրելու և հետկոնֆլիկտային վերականգնման

⁴ Խաղաղաշինական գործողությունների ցանկը տես Հավելված Գ-ում:

միասնական ռազմավարություններ ներկայացնելու նպատակով համակարգում է միջազգային հանրության տրամադրության տակ եղած ռեսուրսները և ուշադրություն է կենտրոնացնում հակամարտություն վերապրած երկրներում վերակառուցման, հաստատությունների կառուցման և կայուն զարգացման վրա: Հանձնաժողովը համախմբում է հակամարտության կանխարգելման, միջնորդության, խաղաղապահության, մարդու իրավունքների հարգման, օրենքի գերակայության, մարդասիրական աջակցության, վերակառուցման և երկարաժամկետ զարգացման ոլորտներում ՄԱԿ-ի ձեռք բերած լայն հնարավորություններն ու փորձը:

Մասնավորապես հանձնաժողովը կատարում է հետևյալ գործառնությունները.

- ներկայացնում է հետկոնֆլիկտային խաղաղաշինության և վերականգնման միասնական ռազմավարություններ,
- օգնում է ապահովել վերականգնման սկզբնական գործողությունների երկարաժամկետ կանխատեսելի ֆինանսավորում, ինչպես նաև ապահովում է միջնաժամկետ և երկարաժամկետ ֆինանսական ներդրումներ,
- ընդլայնում է միջազգային հանրության՝ հետկոնֆլիկտային վերականգնման մտահոգության ժամանակահատվածը,
- կատարելագործում է կուտակված լավագույն փորձն այն ոլորտներում, որոնք պահանջում են լայնածավալ համագործակցություն քաղաքական, ռազմական, մարդասիրական և զարգացման կառույցների միջև:

Հանձնաժողովը բաղկացած է Կազմակերպչական կոմիտեից և առանձին երկրներով զբաղվող հանձնախմբերից: Կազմակերպչական կոմիտեում ներկայացված են 31 անդամ երկրներ, որոնցից՝

1. յոթը ընտրված են Անվտանգության խորհրդի կողմից,
2. յոթը՝ Տնտեսական և սոցիալական խորհրդի կողմից 2 տարի ժամկետով, նախապատվություն է տրվում նրանց, ովքեր հետկոնֆլիկտային վերականգնման փորձ ունեն,
3. հինգը՝ ՄԱԿ-ի բյուջեներին առավել ֆինանսական միջոցներ հատկացնող, ներառյալ ՄԱԿ-ի գործակալություններին, ծրագրերին և Խաղաղաշինության հիմնադրամին առավել կամավոր նվիրատվություններ կատարող 10 երկրներից (առաջին հնգյակը),
4. հինգը՝ ՄԱԿ-ի առաքելություններին զինվորական անձնակազմ և քաղաքացիական ոստիկաններ տրամադրող 10 երկրներից (առաջին հնգյակը),
5. յոթը Գլխավոր ասամբլեայի կողմից 2 տարի ժամկետով ընտրվող և վերընտրման իրավունք ունեցող լրացուցիչ անդամներ են, որոնց ներգրավումը կոմիտեում նպատակ ունի նվազեցնել աշխարհագրական անհամաչափությունը և հետկոնֆլիկտային փորձ ունեցող երկրներ ներգրավել:

Գլխավոր քարտուղարը հանձնաժողովի աշխատանքը ուժեղացնելու նպատակով առաջարկեց հիմնադրել Խաղաղաշինության աջակցման գրասենյակ, որը հաջողությամբ կկիրառի խաղաղաշինության ոլորտում ՄԱԿ-ի տարբեր կառույցների, ի թիվս որոնց Քաղաքական հարցերի վարչության, Տնտեսական և սոցիալական խորհուրդի, ինչպես նաև այլ կառույցների կուտակած փորձը: Ի լրումն Խաղաղաշինության աջակցման գրասենյակի, 2006թ. հոկտեմբերի 11-ին հիմնվեց Խաղաղաշինության հիմնադրամը, որը գործելու է որպես հակամարտություն ապրած երկրներին արագ և անհապաղ ֆինանսական աջակցություն ցույց տվող հիմնադրամ: Ըստ այդ հիմնադրամի լիազորությունների՝ ամենամեծ արժեքը վերակառուցման նախնական փուլի համար անհրաժեշտ միջոցների տրամադրումն է, երբ ուրիշ աղբյուրները դեռևս անհա-

սանելի են:

Խաղաղաշինության աջակցման գրասենյակը պետք է օժանդակի Խաղաղաշինության հանձնաժողովին՝ լրացնելով ՄԱԿ-ի հնարավորությունների փոխկապակցության պակասը և վերլուծական ու տեխնիկական աջակցություն ցույց տալով, որպեսզի հանձնաժողովն ի վիճակի լինի իրականացնելու իր խորհրդատվական գործառույթը և հիմնավոր որոշումներ կայացնելու հակամարտություն ապրած երկրներում զարգացման և համալիր խաղաղաշինական ռազմավարությունների իրականացման վերաբերյալ:

Պայմանավորված երկրի առանձնահատկություններով՝ հետկոնֆլիկտային խաղաղաշինությունը պահանջում է համակարգված և փոխկապակցված գործողություններ քաղաքական, խաղաղաշինական, մարդասիրական և մարդու իրավունքների պաշտպանության ոլորտներում, որոնք միասին նպաստում ու աջակցում են կայուն կառույցներին, հաստատություններին և ընդունված ընթացակարգերին՝ ամրապնդելով համատեղ գոյակցությունը և նվազեցնելով զինված հակամարտության վերսկսման հավանականությունը: Հիմնական խնդիրը տեղի քաղաքական վերնախավին ներգրավելն է, որպեսզի վերահսկի քաղաքական անցումային շրջանն ու պետական սահմանադրականության գործընթացները: Դա նշանակում է աջակցություն քաղաքական ուժերի երկխոսության կայացման, սահմանադրականության հաստատման, անցումային շրջանում արդարադատության ապահովման, ինչպես նաև անվտանգության մարմինների և արդարադատության համակարգի բարեփոխման գործընթացներում: Խնդիրների շարքում է նաև փախստականների և, որ առավել կարևոր է, նախկին զինյալների վերադարձը, վերաբնակեցումը և հասարակության մեջ ինտեգրումը: Մեկ այլ մարտահրավեր է պետականության վերակառուցման ներքին ջանքերի խրախուսումը, ինչը հնարավոր է կառավարման համակարգի, քաղաքական հաստատությունների և որոշումների կայացման գործընթացների հստակեցման և ամրապնդման միջոցով: Այս միջոցառումները պետք է հնարավորություն տան պետությանը իրականացնելու իր հիմնական գործառույթները, ինչպիսիք են անվտանգության պահպանումը, հանրային ֆինանսների վերահսկումը, ենթակառուցվածքների և հանրային ծառայությունների ձևավորումը, արդարադատության վարչարարությունն ու ներդրումը մարդկային կապիտալի մեջ:

Մինչև այժմ Խաղաղաշինության հանձնաժողովը Խաղաղաշինության աջակցման գրասենյակի և Խաղաղաշինության հիմնադրամի աջակցությամբ, ինչպես նաև տարածաշրջանային կազմակերպությունների ու միջազգային հանրության հետ համագործակցությամբ Բուրունդիում և Սիեռա Լեոնեում արձագանքել է 2 խաղաղաշինական մարտահրավերի, որտեղ կայուն խաղաղության անցման զգալի առաջընթաց է արձանագրվել:

Բուրունդիում արձանագրված առաջընթացը հնարավոր դարձավ ներառական կառավարության ձևավորման, նոր սահմանադրության ընդունման, ազատ և արդար ընտրությունների անցկացման և միջազգային ու տարածաշրջանային միջնորդների միջամտությամբ հրադարի բազմակողմանի ռեժիմի կնքման միջոցով: Հանձնաժողովը քննարկեց և ձևակերպեց այն կարևոր խնդիրները, որոնք պետք է լուծում գտնեն երկարատև խաղաղություն և զարգացում ապահովելու համար: Այստեղ հանձնաժողովը իրականացնում է համալիր միջոցառումներ՝ կենտրոնանալով չորս առաջնահերթությունների վրա.

- *Լավ կառավարման խթանում:* Լավ և զենդեռային, տարիքային ու տարածաշրջանային հավասարակշռված կառավարման համար տարբեր մակարդակներում երկխոսության և Բուրունդիի հասարակության բոլոր ուժերի ներգրավման միջոցով տարբեր շահագրգիռ կողմերի ներուժի ձևավորում:

- *Իրավական պետության ուժեղացում* արդարադատության արդար վարչարարություն ասպահովելու, անպատժելիության դեմ պայքարի, արդարադատության համակարգի անկախության, քրեակատարողական ծառայությունների արդիականացման, մարդու իրավունքների ազգային անկախ հանձնաժողովի ստեղծման և մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի ստեղծման համար:
- *Անվտանգության համակարգի բարեփոխում*՝ շեշտը դնելով անվտանգության համակարգի բարեփոխման և զարգացման վրա՝ համաձայն խաղաղության պայմանագրի հատուկ պայմանների, ինչպես նաև օրենքի գերակայության, մարդու իրավունքների և արդյունավետ կառավարման սկզբունքների, ներառյալ քաղաքացիական անձանց զինաթափման, փոքր տրամաչափի զինատեսակների վերահսկման և տարածման արգելման անհրաժեշտության վրա:
- *Համայնքի վերականգման ասպահովում* աղքատության, սովի, ինչպես նաև հողի հարցի լուծման միջոցով, ինչը կհանգեցնի նշանակալից արդյունքների ամենախոցելի բնակչության համար:

1999թ. խաղաղության համաձայնագրի ստորագրումից ի վեր **Սիեռա Լեոնեն** ահռելի առաջընթաց է ունեցել խաղաղության ասպահովման և հետկոնֆլիկտային վերականգնման գործում: Առկա ռազմավարական հայեցակարգերը և պլանավորման փաստաթղթերը, ինչպիսիք են «Տեսիք 2025»-ը, Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագիրը, Խաղաղության ամրապնդման ռազմավարությունը, Ջինադադարի և հաշտեցման հանձնաժողովի զեկույցը, Լավ կառավարման և հաշվետվության դաշնագիրը, ինչպես նաև Անվտանգության խորհրդի համապատասխան բանաձևերը և հռչակագրերը, մինչ այս ուղղորդել են կառավարության և նրա գործընկերների աշխատանքը: Կառավարության և միջազգային դերակատարների հետ քննարկումներում հանձնաժողովը ձևակերպել է չորս հիմնական խնդիրներ, որոնք պետք է լուծվեն երկարատև և կայուն խաղաղության հաստատման ճանապարհին:

- *Երիտասարդական գործազրկություն և երիտասարդության դերի մեծացում* գործազրկության հաղթահարման, երկարատև տնտեսական աճի ասպահովման, մասնավոր հատվածի զարգացման և օտարերկրյա ներդրումների համար նպաստավոր պայմանների ստեղծման միջոցով: Հանձնաժողովը ընդգծել է, որ մի շարք հարցեր պետք է լուծում գտնեն այս համատեքստում: Այդ խնդիրների շարքում են գյուղատնտեսությունը, էլեկտրականության, ջրի և հիմնարար ենթակառուցվածքների մատչելիությունը, արդյունավետ կառավարումը և կոռուպցիայի դեմ ուղղված միջոցառումները, աջակցությունը մանր և միջին ձեռներեցներին, բնակչության և կառավարության շահերից ելնելով՝ բնական ռեսուրսների պետական տնօրինումը:
- *Արդարադատության և անվտանգության համակարգի բարեփոխում*. հանձնաժողովն իր ուժերը կհամախմբի Սիեռա Լեոնեի կառավարության սահմանադրական և օրենսդրական բարեփոխումների աջակցության համար: Հանձնաժողովը քննարկել է նաև լուծման կարոտ այլ կարևոր խնդիրներ, որոնց շարքում են Սիեռա Լեոնեի զինված ուժերի կայունությունը և թվաքանակը, հասարակության և ոստիկանության հարաբերությունների բարելավումը, զինված ուժերի անձնակազմի ապրուստի և աշխատանքի պայմանների բարելավումը:
- *Ժողովրդավարության ամրապնդում և արդյունավետ կառավարում*. աջակցություն պետական կառավարման հաստատություններին բոլոր քաղաքական կուսակցությու-

յունների երկխոսության և հաշտեցման միջոցով, ինչպես նաև հասարակության բոլոր շերտերի՝ մասնավորապես կանանց և երիտասարդների ներգրավում որոշումների ընդունման գործընթացում:

- *Ներուժի ձևավորում*. հանձնաժողովի ներգրավվածությունն այս ոլորտում ուղղվել է քաղաքացիական ծառայության համապարփակ ծրագրի մշակման ուղղությամբ կառավարության աշխատանքների աջակցությանը: Այդ ջանքերը արդյունավետ կառավարում կապահովեն և նախաձեռնությունների իրականացման հնարավորություն կընձեռեն կառավարությանը:

Խաղաղությունն ու անվտանգությունը XXI դարում

XX դարի ավարտը նշանավորվեց Ռուսոստի և Գարֆուրի սարսափելի ցեղասպանություններով և Անգոլայի հակամարտության մեջ կրկին ներքաշվելով: Դա ցույց տվեց, որ էական բացթողումներ կան խաղաղության պահպանման միջազգային ռազմավարություններում, որոնք պայմանավորված էին այն հանգամանքով, որ առավել մեծ ուշադրություն էր դարձվում հակամարտության կանխարգելման և հետևյալ ֆիլիտային խաղաղապահության խնդիրներին՝ անտեսելով հակամարտող երկրների հետևյալ ֆիլիտային զարգացման հարցը: Աշխարհի առաջնորդները որոշակի քայլեր ձեռնարկեցին այս բացը լրացնելու համար:

2005թ. սեպտեմբերին Նյու Յորքում կայացած ՄԱԿ-ի գագաթաժողովի ժամանակ աշխարհի առաջնորդները ձևակերպեցին խաղաղության պահպանման XXI դարի մարտահրավերին դիմակայելու ուղիները: Առաջնորդները ընդունեցին, որ ՄԱԿ-ի խաղաղության պահպանման ջանքերը առանցքային դեր ունեն հակամարտող կողմերի ռազմական գործողությունները դադարեցնելու հարցում և արձանագրեցին վերջին տարիների առաջընթացը, ներառյալ բարդ իրավիճակներում ինտեգրացված առաքելությունների տեղակայման հանգամանքը:


Գագաթաժողովը ևս մեկ անգամ ընդգծեց տարածաշրջանային կազմակերպությունների ներդրումը խաղաղության և անվտանգության գործում և կարևորեց ՄԱԿ-ի ու տարածաշրջանային կազմակերպությունների հետագա համագործակցության խորացումը՝ մասնավորապես ընդգծելով հզոր Աֆրիկյան միության առկայության կարևորությունը:

Գագաթաժողովը շեշտեց հետևյալ ֆիլիտային խաղաղաշինության և հաշտեցման ոլորտում համակարգված, փոխհամաձայնեցված և ինտեգրացված մոտեցման անրաժեշտությունը: Այդ համատեքստում էլ գագաթաժողովը որոշեց ստեղծել Խաղաղաշինության սույն հանձնաժողովը՝ որպես միջկառավարական խորհրդատվական մարմին: Հանձնաժողովի հիմնական նպատակն է միավորել ներգրավված կողմերին, համակարգել ռեսուրսները և առաջարկել, ինչպես նաև խորհրդատվություն տրամադրել հետևյալ ֆիլիտային խաղաղաշինության և վերականգման ինտեգրացված ռազմավարությունների մշակման հարցում:

Ստեղծվեց մի կառույց, որը միավորում է Գլխավոր ասամբլեան, Տնտեսական և սոցիալական և Անվտանգության խորհուրդները, ներգրավում բազմաթիվ երկրներ, մասնավորապես տարածաշրջանային դերակատարներին և անձնակազմ ու ֆինանսական միջոցներ հատկացնող խոշորագույն անդամ երկրներին, մի կառույց, որտեղ ՄԱԿ-ը և միջազգային ֆինանսական հաստատությունները կարող են հանդիպել ներգրավված երկրների հետ և, ամենակարևորը, որտեղ իշխանությունները հնարավորություն կունենան ներկայացնելու իրենց տեսակետը և վերականգնման առաջնահերթությունները: Այս ամենը վկայում է, որ Խաղաղաշինության հանձնաժողովի ստեղծումը առավել արդյունավետ և վստահելի խաղաղաշինական գործունեության և հետևաբար առավել երկարատև համաշխարհային անվտանգության և խաղաղության գրավական է:


Հավելված Ա

Պատկեր 1. ՄԱԿ-ի Խաղաղապահ առաքելությունների ռազմական և ոստիկանական անձնակազմ հատկացնող առաջին քսան երկրները (առ 2007թ. դեկտեմբերի 31-ը)



Աղբյուր. United Nations Peace Operations, Year in Review 2007

Պատկեր 2. ՄԱԿ-ի Խաղաղապահ առաքելությունների բյուջեին ֆինանսական հատկացումներ տրամադրող առաջին տասը պետությունները (առ 2006թ. հունվարի 1-ը)



Աղբյուր՝ United Nations Peacekeeping: Meeting New Challenges. Frequently Asked Questions; UNDPI Publication; 2006

Հավելված Բ.

ՄԱԿ-ի Խաղաղապահ գործողությունները 1948-2008թթ.

UNTSO	ՄԱԿ-ի զինադադարի վերահսկման կազմակերպություն	1948թ. մայիս	առ այսօր
UNMOGIP	ՄԱԿ-ի ռազմական դիտորդական խումբ Հնդկաստանում և Պակիստանում	1949թ. հունվար	առ այսօր
UNEF I	ՄԱԿ-ի արտակարգ ուժեր I	1956թ. նոյեմբեր	1967թ. հունիս
UNOGIL	ՄԱԿ-ի դիտորդական խումբ Լիբանանում	1958թ. հունիս	1958թ. դեկտ.
ONUC	ՄԱԿ-ի գործողություն Կոնգոյում	1960թ. հուլիս	1964թ. հունիս
UNSF	ՄԱԿ-ի անվտանգության ուժեր Արևմտյան Նոր Գվինեայում	1962թ. հոկտ.	1963թ. ապրիլ
UNYOM	ՄԱԿ-ի դիտորդական առաքելություն Եմենում	1963թ. հուլիս	1964թ. սեպտ.
UNFICYP	ՄԱԿ-ի խաղաղապահ ուժեր Կիպրոսում	1964թ. մարտ	առ այսօր
DOMREP	Գլխավոր քարտուղարի ներկայացուցչի առաքելություն Գոմինիկյան Հանրապետությունում	1965թ. մայիս	1966թ. հոկտ.
UNIPOM	ՄԱԿ-ի Հնդկա-պակիստանյան դիտորդական առաքելություն	1965թ. սեպտ.	1966թ. մարտ
UNEF II	ՄԱԿ-ի արտակարգ ուժեր II	1973թ. հոկտ.	1979թ. հուլիս
UNDOF	ՄԱԿ-ի տարանջատման դիտորդական ուժեր	1974թ. հունիս	առ այսօր
UNIFIL	ՄԱԿ-ի ժամանակավոր ուժեր Լիբանանում	1978թ. մարտ	առ այսօր
UNGOMAP	ՄԱԿ-ի բարի ծառայությունների առաքելություն Աֆղանստանում և Պակիստանում	1988թ. մայիս	1990թ. մարտ
UNIIMOG	ՄԱԿ-ի Իրան-իրաքյան ռազմական դիտորդական խումբ	1988թ. օգոստոս	1991թ. փետր.
UNAVEM I	ՄԱԿ-ի Անգոլայի տեսչական առաքելություն I	1989թ. հունվար	1991թ. հունիս
UNTAG	ՄԱԿ-ի անցումային օժանդակության խումբ	1989թ. ապրիլ	1990թ. մարտ
ONUCA	ՄԱԿ-ի դիտորդական խումբ Կենտրոնական Ամերիկայում	1989թ. նոյեմբեր	1992թ. հունվար
UNIKOM	ՄԱԿ-ի Իրաքա-քուվեյթյան դիտորդական առաքելություն	1991թ. ապրիլ	2003թ. հոկտ.
MINURSO	ՄԱԿ-ի առաքելություն Արևմտյան Սահարայի հանրաքվեի համար	1991թ. ապրիլ	առ այսօր
UNAVEM II	ՄԱԿ-ի Անգոլայի տեսչական առաքելություն II	1991թ. հունիս	1995թ. փետր.
ONUSAL	ՄԱԿ-ի դիտորդական առաքելություն Սալվադորում	1991թ. հուլիս	1995թ. ապրիլ

ՄԱԿ-ի Խաղաղության մանդատը

UNAMIC	ՄԱԿ-ի առաջատար առաքելություն Կամբոջայում	1991թ. հոկտ.	1992թ. մարտ
UNPROFOR	ՄԱԿ-ի պաշտպանական ուժեր	1992թ. փետրվար	1995թ. դեկտ.
UNTAC	ՄԱԿ-ի անցումային իշխանություն Կամբոջայում	1992թ. մարտ	1993թ. սեպտ.
UNOSOM I	ՄԱԿ-ի գործողություն Սոմալիում I	1992թ. ապրիլ	1993թ. մարտ
ONUMOZ	ՄԱԿ-ի գործողություն Մոզամբիկում	1992թ. դեկտ.	1994թ. դեկտ.
UNOSOM II	ՄԱԿ-ի գործողություն Սոմալիում II	1993թ. մարտ	1995թ. մարտ
UNOMUR	ՄԱԿ-ի դիտորդական առաքելություն Ուգանդա-Ռուանդայում	1993թ. հունիս	1994թ. սեպտ.
UNOMIG	ՄԱԿ-ի դիտորդական առաքելություն Վրաստանում	1993թ. օգոստոս	առ այսօր
UNOMIL	ՄԱԿ-ի դիտորդական առաքելություն Լիբերիայում	1993թ. սեպտ.	1997թ. սեպտ.
UNMIH	ՄԱԿ-ի առաքելություն Հաիթիում	1993թ. սեպտ.	1996թ. հունիս
UNAMIR	ՄԱԿ-ի օժանդակության առաքելություն Ռուանդայի համար	1993թ. հոկտ.	1996թ. մարտ
UNASOG	ՄԱԿ-ի Աուգուի գոտու դիտորդական խումբ (Չադ/Լիբիա)	1994թ. մայիս	1994թ. հունիս
UNMOT	ՄԱԿ-ի դիտորդների առաքելություն Տաջիկստանում	1994թ. դեկտ.	2000թ. մայիս
UNAVEM III	ՄԱԿ-ի Անգոլայի տեսչական առաքելություն III	1995թ. փետր.	1997թ. հունիս
UNCRO	ՄԱԿ-ի վստահության վերականգնման գործողություն Խորվաթիայում	1995թ. մայիս	1996թ. հունվար
UNPREDEP	ՄԱԿ-ի կանխարգելման տեղակայման ուժեր	1995թ. մարտ	1999թ. փետր.
UNMIBH	ՄԱԿ-ի առաքելություն Բոսնիա և Հերցեգովինայում	1995թ. դեկտ.	2002թ. դեկտ.
UNTAES	ՄԱԿ-ի ժամանակավոր կառավարում Արևելյան Սլավոնիայի, Բարանյայի և Արևմտյան Սիրմիումի համար	1996թ. հունվար	1998թ. հունվար
UNMOP	ՄԱԿ-ի դիտորդների առաքելություն Պրևալայում	1996թ. հունվար	2002թ. դեկտ.
UNSMIH	ՄԱԿ-ի աջակցության առաքելություն Հաիթիում	1996թ. հուլիս	1997թ. հուլիս
MINUGUA	ՄԱԿ-ի տեսչական առաքելություն Գվատեմալայում	1997թ. հունվար	1997թ. մայիս

MONUA	ՄԱԿ-ի դիտորդական առաքելություն Անգոլայում	1997թ. հունիս	1999թ. փետր.
UNTMIH	ՄԱԿ-ի անցումային առաքելություն Հաիթիում	1997թ. օգոստոս	1997թ. նոյեմբեր
MINOPUH	ՄԱԿ-ի քաղաքացիական ոստիկանության առաքելություն Հաիթիում	1997թ. դեկտ.	2000թ. մարտ
UNPSG	ՄԱԿ-ի քաղաքացիական ոստիկանության աջակցության խումբ	1998թ. հունվար	1998թ. հոկտ.
MINURCA	ՄԱԿ-ի առաքելություն Կենտրոնական Աֆրիկյան Հանրապետությունում	1998թ. ապրիլ	2000թ. փետր.
UNOMSIL	ՄԱԿ-ի դիտորդական առաքելություն Սիեռա Լեոնեում	1998թ. հուլիս	1999թ. հոկտ.
UNMIK	ՄԱԿ-ի ժամանակավոր կառավարման առաքելություն Կոսովոյում	1999թ. հունիս	առ այսօր
UNAMSIL	ՄԱԿ-ի առաքելություն Սիեռա Լեոնեում	1999թ. հոկտ.	2005թ. դեկտ.
UNTAET	ՄԱԿ-ի անցումային կառավարում Արևելյան Թիմորում	1999թ. հոկտ.	2002թ. մայիս
MONUC	ՄԱԿ-ի դիտորդական առաքելություն Կոնգոյի Ժողովրդավարական Հանրապետությունում	1999թ. նոյեմբեր	առ այսօր
UNMEE	ՄԱԿ-ի առաքելություն Եթովպիայում և Էրիթրեայում	2000թ. հուլիս	առ այսօր
UNMISSET	ՄԱԿ-ի աջակցության առաքելություն Արևելյան Թիմորում	2002թ. մայիս	2005թ. մայիս
UNMIL	ՄԱԿ-ի առաքելություն Լիբերիայում	2003թ. սեպտ.	առ այսօր
UNOCI	ՄԱԿ-ի գործողություններ Կոտ դ'Իվուարում	2004թ. ապրիլ	առ այսօր
MINUSTAH	ՄԱԿ-ի կայունացման առաքելություն Հաիթիում	2004թ. հունիս	առ այսօր
ONUB	ՄԱԿ-ի գործողություններ Բուրունդիում	2004թ. հունիս	2006թ. դեկտ.
UNMIS	ՄԱԿ-ի առաքելություն Սուդանում	2005թ. մարտ	առ այսօր
UNMIT	ՄԱԿ-ի ինտեգրացված առաքելություն Թիմոր-Լեստեում	2006թ. օգոստոս	առ այսօր
UNAMID	Աֆրիկյան միության/ՄԱԿ-ի Համատեղ գործողություն Գարֆուրում	2007թ. հուլիս	առ այսօր
MINURCAT	ՄԱԿ-ի առաքելություն Կենտրոնական Աֆրիկյան Հանրապետությունում և Չադում	2007թ. սեպտ.	առ այսօր

Աղբյուր՝ <http://www.un.org/Depts/dpko/list/list.pdf>

Հավելված Գ.

**ՄԱԿ-ի իրականացրած խաղաղաշինական գործողությունները
(առ 2007թ. դեկտեմբերի 31-ը)**

UNPOS	ՄԱԿ-ի Սոմալիի գծով քաղաքական գրասենյակ	1995թ. ապրիլի 15-ից	
UNOGBIS	ՄԱԿ-ի խաղաղաշինության աջակցման գրասենյակ Գվինեա Բիսաուում	1999թ. մարտի 3-ից	
UNSCO	ՄԱԿ-ի Մերձավոր Արևելքի գծով հատուկ համակարգող	1999թ. հոկտեմբերի 1-ից	
BONUCA	ՄԱԿ-ի խաղաղաշինության գրասենյակ Կենտրոնական Աֆրիկյան Հանրապետությունում	2000թ. փետրվարի 15-ից	
UNSCOL	ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղարի Լիբանանի գծով հատուկ համակարգողի գրասենյակ	2007թ. փետրվարի 16-ից	
UNOWA	ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղարի Արևմտյան Աֆրիկայի գծով հատուկ ներկայացուցչի գրասենյակ	2001թ. նոյեմբերի 29-ից	
UNAMA*	ՄԱԿ-ի աջակցության առաքելություն Աֆղանստանում	2002թ. մարտի 28-ից	
UNAMI	ՄԱԿ-ի Իրաքի գծով աջակցության առաքելություն	2003թ. օգոստոսի 14-ից	
UNIOSIL*	ՄԱԿ-ի ինտեգրացված գրասենյակ Սիեռա Լեոնեում	2006թ. հունվարի 1-ից	
BINUB*	ՄԱԿ-ի ինտեգրացված գրասենյակ Բուրունդիում	2007թ. հունվարի 1-ից	
UNMIN	ՄԱԿ-ի առաքելություն Նեպալում	2007թ. հունվարի 23-ից	
UNRCCA	ՄԱԿ-ի Կենտրոնական Ասիայի գծով կանխարգելիչ դիվանագիտության տարածաշրջանային կենտրոն	2007թ. դեկտեմբերի 10-ից	
2007թ. ավարտված առաքելություններ			
UNTOP	ՄԱԿ-ի խաղաղաշինական գրասենյակ Տաջիկստանում	2000թ. հունիսի 1-ից	2007թ. հուլիսի 31

Աղբյուր. United Nations Peace Operations, Year in Review 2007

Օգտագործված գրականության ցանկ

1. Միավորված ազգերի կազմակերպության Կանոնադրությունը և Արդարադատության միջազգային դատարանի կարգավիճակը. Նյու Յորք, 2005թ.
2. Միավորված ազգերի խաղաղարարությունը. Նոր մարտահրավերների դիմակայում. Հաճախ տրվող հարցեր. ՄԱԿ ՀՏՎ հրատարակություն, 2006թ.
3. Ավելի մեծ ազատության պայմաններում. Դեպի զարգացում, անվտանգություն և Մարդու իրավունքներ բոլորի համար. Գլխավոր քարտուղարի զեկույցը. ՄԱԿ-ի հրատարակություն, Նյու Յորք, 2005թ.
4. Փոփոխվող աշխարհի մարտահրավերների դիմակայում. Գլխավոր քարտուղարի տարեկան զեկույցը կազմակերպության աշխատանքների վերաբերյալ. ՄԱԿ-ի հրատարակություն, Նյու Յորք, 2006թ.
5. ՄԱԿ-ի Խաղաղապահ գործողություններ, Տարեկան ակնարկ 2007
6. Քոֆի Անան. Ջինված հակամարտությունների կանխում. Գլխավոր քարտուղարի զեկույցը. Միավորված ազգերի կազմակերպություն, Նյու Յորք, 2002թ.
7. Ավելի անվտանգ աշխարհ. Մեր համատեղ պատասխանատվությունը. Սպառնալիքների վերաբերյալ Գլխավոր քարտուղարի բարձր մակարդակի զեկույցը. Մարտահրավերներ և փոփոխություն. Միավորված ազգերի կազմակերպություն, 2004թ.
8. Սերգեյ Օրջոնիկիձե. Հաջողությամբ հասնել խաղաղության, զարգացման և Մարդու իրավունքների, Ժնևում ՄԱԿ-ի գրասենյակ. 2007թ.
9. Հիմնական փաստեր ՄԱԿ-ի մասին, Երևան 2002թ.
10. 2005թ. Համաշխարհային գազաթափողովի արդյունքները. Խաղաղաշինության աջակցման գրասենյակ. 2006-2007թթ. երկամյա ծրագրի բյուջեի վերանայված նախահաշիվը. Գլխավոր քարտուղարի զեկույցը. 23 փետրվարի, 2006թ. <http://daccessdds.un.org/doc/UNDOC/GEN/N06/252/89/PDF/N0625289.pdf?OpenElement>
11. Խաղաղաշինության հանձնաժողովի աշխատանքի նախնական զեկույց. Միավորված ազգերի կազմակերպության Խաղաղաշինության հանձնաժողով. 13 հուլիսի, 2007թ. <http://daccessdds.un.org/doc/UNDOC/GEN/N07/404/13/PDF/N0740413.pdf?OpenElement>
12. <http://www.un.org/Depts/dpko/list/list.pdf>
13. <http://www.un.org/Depts/dpa/conflict.html>

ՄԱԿ-ի Խաղաղության մանդատը
Տեղեկագիր No 1.
Մայիս 2008թ.

UN Peace Mandate
Reference Paper No.1
May 2008



UN Department of Public Information
Yerevan Office
UN AN-500-May 2008
UNO/DPI Yerevan/084



Տպագրված է «ԼԻՄՈՒՇ» ՍՊԸ-ի
տպարանում:
Ք. Երևան, Տերյան 72, հեռ. 58.22.99
E-mail: info@limush.am